

319.

1898. № 437.

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՆՑԵԼԻՑ

17317



Института
Природы и Познания
Природных Наук
СССР



1119

ՄԱՀ
1898

Carin
1221

1898
ԿՐՈ

Ե. ԹՈՓԵԱՆ.

ՅՈՒՂԱՍԱՆԻ ԱՆՑԵԱԼԻՑ

ՊԱՐԱԿԱՆ ՏԵՍԱԹՐԻՒ

БИБЛИОГРАФИЯ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии наук СССР



173/4

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏՊՐԵՐՆ Յ. Ի. ԼԻԲԵՐՄԱՆԻ
1898

1119-612

Доволено Цензурою С.-Петербургъ, 10 Декабря 1897 года.



853-2013

Паровая скропечатня Я. И. Либермана, Фонтанка д. № 86.



ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՆՑԵԱԼԻՑ

Ա.

1453 թուականն էր... Սուլթան Մահմեդ Բ.-ը 250,000 զաղանասիրտ թիւրքերով պաշարել էր Կ. Պօլիսը՝ Յունաստանի մայրաքաղաքը: Յոյները յուսահատական դրութեան մէջ էին: Նրանք հաւաքուել էին իրանց կոստանտին (IX) թագաւորի շուրջը և որոշել էին՝ կամ մեռնել պատռով, կամ փրկել հայրենիքը արիւնարբու թշնամուց:

Թագաւորը հասարակ զինւորականի շորերով կանգնած էր իր հաւատարիմ հպատակների շարքում...

Թէ՛ ծեր, թէ՛ մանուկ, թէ՛ կին, թէ տղամարդ բոլորն էլ կուումէին անասելիք քաջութեամբ, բայց շատ չնշին էին նրանց սյմերը, ուստի և չէին կարող երկար դիմադրել հզօր թշնամուն: Վերջապէս թիւրքերը դրաւեցին քաղաքը և սկսեցին անխնայ կերպով կոտորել բոլոր քրիստոնեաներին: Մի խումբ թիւրք զինւորներ շրջապատեցին թագաւորին: Նա պաշտպանւումէր հերոսական սառնասրաւութեամբ, սակայն թշնամու սուրը ցցուեց նրա կրծքի մէջ և դժբաղդ Բիւզանդիոնի վերջին միապետը գետին վլորուեց.—«Թշուառ հայրենիք»—մըմնջալով:

Երեք օր շարունակուեց թալանն ու կոտորածը: Կատաղի թիւրքերը աւերեցին բաղմաթիւ շինութիւններ, պղծեցին քրիստոնէական սրբութիւնները, քարուքանդ արին տաճարներն ու եկեղեցիները: Գետի նման հոսում էր անմեղ զոհերի արիւնը... Անցաւ մի քանի օր: Թիւրքերի գաղանութիւնները ընդհատուեցին: Ամենագեղեցիկ տաճարների գլխին խաչ փոխարէն փայլեց կիսալուսինը և ղանգակների անուշեկ զողանջիւնի փոխարէն լուսեց մուեղզինի մելամաղձոտ երգը:

Սուլթանը իր գահը հաստատեց կ. Պօլսում և այդտեղից շարունակեց նուածել Բալկաննեան թերակղզու մնացած մասերը: Ամեն տեղքրիստոնեաները հերոսական դիմադրութիւն էին ցոյց տալիս, ամեն տեղ սարերն ու գաշտերը ներկուում էին նրանց արիւնով: Բայց ի զուր էր այդ բոլորը՝ անօգուտ էր քրիստոնեաների դիմադրութիւնը: Թիւրքերի հարիւրհաղարաւոր զօրքը մի մեծ հեղեղի նման առաջ էր դնում, ճանապարհին ոչնչացնելով ամեն ինչ թէ բնակութիւն և թէ բուսականութիւն: Մեռաւ Սուլթան Մահմեդը, բայց ժառանգները շարունակեցին նրա սկսած գործը: Մօտաւորապէս հարիւր տարուց յետոյ թիւրքերը արդէն աէր էին գարձել նախնի քաղաքակրթութեան երկրին... Գրեթէ ամբողջ Բալկաննեան թերակղզին իր բաղմաթիւ կղզիներով Օսմաննեան պետութեան ձեռքն անցաւ և այդ օրուանից թիւրքական անարդ լուծը սկսեց ծանրանալ քրիստոնեաների վզին, այդ

օրուանից Խոլամը սկսեց հալածել ու ձնշել Քրիստոսի երկրպագուներին:

Թիւրքերը քրիստոնեաներին «րայա» (Հօա) էին անուանում խլում էին նրանց ունեցուածքը, առեանգում էին աղջիկներին, բռնաբարում էին կանանց...

Մահմեդականը կարող էր ազատ-համարձակ սպանել հարուստ յոյնին, տիրապետել նրա հարստութիւնը և անպատճեմ մնալ: Թափառական թիւրքը իր հաճոյքի համար կարող էր փողոցի միջում, օր-ցերեկով սպանել ամեն մի քրիստոնեայի և անմեղ համարուել:

Ո՞ւր պէտք է գիմեր թշուառ յոյնը, ում պէտք է բողոքէր կեղեքուած քրիստոնեան, երբ գրեթէ բոլոր պաշտօնեաներն էլ մասնակից էին այդ չարագործութիւններին, երբ նրանք էլ իրանց արժանի բաժինն էին սատանում համարձակ մահմեդականի աւարից:

Մեծ վեղերից սկսած մինչև հասարակ զաղիները, աղաները և կալուածատէրերը—բոլորն էլ մի անսաելի կամայականութիւն ու կաշառակերութիւն էին ներկայացնում: Բարձրագոյն իշխանութիւնն էլ իր կողմից քաջալերում, նպաստում էր այդպիսի պաշտօնեաներին, կարծելով թէ բռնակալութեամբ ու գաղանութեամբ միայն կարող է ծնջել յոյների ազգային առանձնայատկութիւնները, ընդունել տալ Մահմեդի զուռանը և այդպիսով այդ ուժեղ տարրը թիւրքերի հետ ձուլելով, միանգամայն ընդմիշտ ամրապնդել իր պետական ցիժը: Մակայն կառավա-

ըութեան այդ ձգտման մէջ էլ չ'կար ոչ մի սիստեմայ, ոչ մի հետեղականութիւն։ Ամեն մի փաշա, ամեն մի պաշտօնեայ անում էր այն, ինչ որ իր սիրտն էր ուզում, ինչ որ հաճոյքն էր թելադրում։ Բացի դրանից խալիֆ Օմարի հին օրէնքները արգելում էին քրիստոնեաներին նոր եկեղեցիներ շինել սրբազն խորհուրդները և ժամերդութիւնը հրապարակով կատարել, գէնք կրել և թամբած ձի հեծնել։ Քրիստոնեաները պարտաւոր էին տարբերուել մահմեդականներից նոյն իսկ իրանց հագուստի ձեռով ու գոյնով։ Եթէ այդ բոլորի վրա աւելացնենք և այն իրողութիւնը, որ թիւրքերը անհամեմատ ծոյլ և անընդունակ էին, քան թէ քրիստոնեաները և ապրում էին գրեթէ վերջիններիս հաշւով, այն ժամանակ հասկանալի կ'լինի, թէ ինչպիսի ստրկական վիճակի մէջ էին գտնուում յոյները։ Կեանքի և զոյքի անապահովութիւնը ստիպում էր նրանց թողնել երկրագործութիւնը և նուիրուել վաճառականութեան։ Այդ բանը նպաստում էր յոյների քաղաքակրթութեան զարգանալուն, որը և կամաց-կամաց բաց էր անում նրանց գիտակցութիւնը։

Թիւրք կառավարութիւնից չափազանց զրդգոհները հաւաքւում էին անմատչելի լեռներում, բնակութիւն էին հաստատում կիրճերում, ուրիշ ապահով տեղերում և այդտեղից երեեմն երեեմն յարձակւում իրանց կեղեքիների միւսուլմանների վրա, թալանում նրանց ունեցուածքը և անխնայ կերպով կոտորում դիմադրողներին։ Այդ յոյները կը-

լեֆտ-արմատոլ-պալիկար(աւազակ, կտրիչ) անուններն ստացան և հետզետէ այնքան բազմացան, այնպիսի սարսափ ձգեցին մահմեդականների մէջ, որ կառավարութեան պաշտօնեաները բանակցութիւն սկսեցին նրանց հետ և առաջարկեցին ազատ ու անկախ ապրել լեռներում, միայն թէ հանգիստ թողնել հարեան մահմեդականներին։ Պալիկարները նչին բացառութեամբ անուշադիր թողին այդ առաջարկութիւնը և շարունակեցին իրանց ասպատակային կեանքը, որովհետև նրանց համար արդէն անփոխարինելի պահանջ էր դարձել մահմեդականի արիւն թափելը, դարձաւոր վլէժը լուծելը... Ճիշտ է պալիկարները երբեմն քրիստոնեաներին էլ էին թալանում, բայց նրանց կոիւր գլխաւորապէս թիւրք տարրի և կառավարութեան դէմ էր։ Երգերի մէջ նրանք նկարագրում էին իրանց բաջագործութիւնները, արտայայտում էին իրանց բուռն ատելութիւնը դէպի թիւրքերը։

Իբրև նմուշ յիշենք մի քանի կտորներ։

...Ես փաշայից երկիւղ չունեմ,

Երկիւղ չունեմ մեծ վեզերից.

Իմ փաշան հրացանս է,

Իմ վեզերս իմ սուրն է ...

**

Կուղես թիւրք բոնակալից չերկնչել

Եւ աշխարհիս վրա աղատ լինել,

— Փառք, պատիւ և կեանք,

Վմեն ինչ սրբ մէջ որոնիր...

Ես քաջ արմատով եմ—սարերի զաւակ.
Սպանել եմ անթիւ թիւրքեր, այրել վաթսուն դիւզ.
Հայց թշնամու սուրը խրուեց իմ կուրծքը.
Ընկերներ, ես մեռնում եմ վաղաժամ... .

**

Խնդրում եմ, դագաղս մեծ շինեցէք,
Որ նրա միջից թիւրքերին նկատեմ
Եւ աջ ու ձախ անդադար
Կրանց գնդակահար անեմ... .

Աչա այդպէս արմատովի վրիժառութիւնը այն
աստիճանի էր հասած, որ նա յանկանումէր նոյն իսկ
դագաղի միջից թիւրքերին «գնդակահար անել»...
Արմատոյները միշտ պաշտպանումէին կառավարու-
թիւնից հալածուած յօյներին: Այդ պատճառով ինք-
նապաշտպանութեան ձգտումը ստիպում էր յօյն
գիւղացուն դաշտից անապատն ապաւինել հօվտից
սարը, ուր իբրև աւազակ, պալիկարի հետ միաբան-
ուելով կենդանի բողոք էր հանդիսանում թիւր-
քական բռնակալութեան դէմ: Այդպիսով օրէցօր
աւելանում էր յօյն աւազակների թիւր, հետզհետէ
նախապատրաստում էր ապստամբութեան հողս:
Եւ թիւրք կառավարութիւնն էլ անդիտակցաբար
շտապեցնում էր այդ ապստամբութիւնը, աւելի ու
աւելի սաստկացնելով իր բռնութիւններն ու հա-
լածանքները:

Բ.

Ստրկական ծանր լծի տակ հեծող յօյները
իրանց հայեացքը ուղղել էին գէպի հիւսիս և օդ-

նութիւն էին սպասում հաւատակից Ուուսաստա-
նից: Դեռ XVII դարում նրանք ոգեորւում, միի-
թարւում էին այդ յոյսով, որ առաջ էր եկել ոռւ-
սաց միապետների մեծամեծ խոստումներից: Մեծն
Պետրոս Ամստերդամում եղած ժամանակ իրա հա-
մար փորագրել էր տուել մի այսպիսի տիտղոս,
«Petrus I. Russo-Graecorum monarcha»—(Պետրոս Ա.
Ռուս-Յունական կայսր):

Նրա ձեռնարկած հարաւային պատերազմների
հեռաւոր նպատակը Յունաստանին տիրապետելն
էր, որ չաջողուեց: Եկատերինա Բ.-ը մտադիր էր
ազատել Յունաստանը և իր թոռին՝ Կոստանտինին
նրա վրա թագաւոր կարգել Այդ բոլոր մտադրու-
թիւններն ու ծրագիրները ի հարկէ գաղտնի չին
մնում յօյներից: Ամեն անզամ, երբ ոռւսները պա-
տերազմ էին ունենում թիւրքերի հետ, առանձին
գործակալներ էին գնում թիւրքիա և քաջալերում-
գրգռում էին Սուլթանի քրիստոնեայ հպատակնե-
րին: 1770 թուականին, երբ ոռւսաց նաւերը մտան
Միջերկրական ծովը և մօտեցան Յունաստանի ափե-
րին, Մօրէայի յօյները այն աստիճան ոգեորուեցին,
որ իսկըն պարզեցին ապստամբութեան դրօշակը:
Սակայն նաւերը շուտով հեռացան, յօյները ան-
պաշտպան մնացին և ամբողջ Մօրէան հրի ու սրի
Ճարակ դարձաւ: Աչա այդպիսի անաջողութիւն-
ները և անվերջ խոսումների չերագործելը սառե-
ցրին յօյներին, մարեցին գէպի Ուուսաստանն ու-
նեցած յօյսը:

Բայց դրա փոխարէն նրանց մէջ առաջ եկաւ

ինքնավատահութիւն և սեպհական ոյժերով գործելու ցանկութիւն:

Ֆրանսիական յեղափոխութիւնը, որ ցնցեց ամբողջ աշխարհը, զօրեղ ազգեցութիւն ունեցաւ յշների վրա էլ: Այդ յեղափոխութեան գաղափարներով յափշտակուելով և իր հայրենիքի ազատութեամբ ոգեսորուելով, յոյն բանաստեղծ Կոստանտին Ռիգասը—(ծնուել է 1753 թ.)—ճանապարհորդեց ամբողջ Յունաստանում, գաղթական յոյների մէջ, Դանուբեան իշխանութիւններից անցաւ Վիէննա և ամեն տեղ զրգուց-ոգեսորեց յոյներին: Նա իր սրտառուչ ոտանաւորներով երգում էր Յունաստանի անցեալ փառքերը, ներկայ ստրկութիւնը և ապագայ աղատութիւնը: Նա աշխատում էր աղնուացնել յոյն աւազակներին և դիմում էր նրանց այս խօսքերով.

«Ով իմ եղբայրք պալեկարներ. մի՞թէ գեռերկար առիւծի նման առանձնացած պիտի ապրիք կիրճերում, լեռնոտ ու ժայռոտ տեղերում... Մի՞թէ գեռ երկար լոյսից փախչելով պիտի խարխափէր մութ-մութ այրերում; խոնաւ անտառներում... Մի՞թէ այսուհետեւ էլ անպաշտպան պիտի թողնէր ձեր զաւակներին ու ծնողներին, ձեր տունն ու տեղը, ձեր հայրենիքն ու բարեկամներին... Բաւ է որքան անտարբեր մնացիք. ժամէ գործելու: Ուրեմն եկէք-միացէք և աղատեցէք ձեր մայր Յունաստանը: Յիշեցէք, որ աւելի լաւ է մի ժամ աղատ ապրել քան թէ հազարաւոր տարիներ անցկացնել ստրկութեան լծի տակ, բռնակալ Ճանկերում...»

Ազգասէր բանաստեղծի խօսքերը արագութեամբ տարածւում էին ամեն տեղ և երկար ժամանակ պտտառում բերնից-բերան: Ինքը Ռիգասն էլ ոչ հանգիստ ունէր, ոչ դադար: Նա շարունակ պատերազմական ծրագիրներ էր կազմում, բանակցում էր գետպանների հետ և վերջապէս Վենետիկի անկումից յետոյ գնաց Տրիեստ՝ անձամբ Նապալէօն Բոնապարտէյի հետ տեսնուելու և նրանից օգնութիւն խնդրելու համար. բայց Աւստրիական կառավարութիւնը դաւաճանութեամբ բռնեց Ռիգասին և նրա հինգ ընկերներին և յանձնեց Բէլգրադի փաշյին: Փաշյի հրամանով բանաստեղծին կապեցին երկու տախտակների մէջ և սղոցեցին (1798 թ.): Մեռնելուց առաջ նա հետեւեալ նշանաւոր բառերն արտասանեց.

— «Ես սերմը ցանեցի. կ' գայ ժամանակ, երբ իմ ազգը գեղեցիկ պատղները կ' հնձէ»:

Ռիգասի հինգ ընկերներն էլ հերոսութեամբ ընդունեցին մահը՝ «Կեցցէ՛ Յունաստան, կեցցէ՛ աղատութիւն» կանչելով: Ռիգասը ամենայն իրաւամբ Յունական աղատութեան նախահայրը և առաջին նահատակն է համարւում: Նրա նահատակութիւնը մէծ զայրոյթ և խլբդում առաջ բերեց յօյների մէջ: Բ. Դուռը փորձեց հոգեսոր իշխանութեան միջոցով ազգել յոյն ժողովրդի վրա: 1798 թուականին, յոյների ամենաջերմ ոգեսորութեան ժամանակ, սառը ջրի նման լցս տեսաւ Անթիմոս պատրիարքի «Հայրական խրատը», որով նա համազում էր իր հօտին հանգարտուել և հաւատարիմ մնալ

Օսմանեան բարեխնամ պետութեանը: Սակայն այդ «խրամը» բոլորովին հակառակ ազգեցութիւն ունեցաւ... Կարծ ժամանակից յետոյ նշյն իսկ շատ բարձրաստիճան հոգեսորականներ միացան յեղափոխականների հետ և նրանց գաղափարների ամենաջերմ պաշտպանը դարձան: Դրանից յետոյ յունական յեղափոխութեան աշխարհական և հոգեսորական առաջնորդները ձեռք-ձեռքի տուած սկսեցին ամենայն եռանդով նախապատրաստուել, զէնքեր գնել, մանր-մանր հայդուկային խմբեր կազմակերպել և այլն: Գործի գլխաւոր ղեկավարն էր Կօրայիս անունով մի յշն, որ իր բարձրագոյն կրթութիւնը ստացել էր Ֆրանսիայում: 1801 թուականին, երբ Ֆրանսիական զօրքերը ուղղում էին Ալբանիայի վրայով մտնել Թիւրքիայի սահմանները, Կօրայիսը նամակներ ուղարկեց ամեն տեղ, որպէս վե յշները պատրաստ լինեն և քրիստոնեայ զօրքը երեալուն պէս պարզեն ապստամբութեան դրօշակը: Սակայն շուտով մի քանի հանգամանքներ ջախջախեցին նրա բոլորյայները: Նա համոզուեց, որ ոչ մի դէպքում չի կարելի յշս դնել օտարների վրա, որ յունական ժողովուրդը ինքը պիտի կարողանայ իր արդար պահանջը կատարել տալ որ դրա ամենապղու դեղը զիտութեան լոյսն է: Դրանից յետոյ նա համոզում էր յշն երիտասարդներին վերադառնալ հայրենիք, ամեն տեղ հիմնել ուսումնարաններ և աշխատել կրթութեան միջոցով նախապատրաստել ժողովրդին և արծարծել ազատութեան վեհ գաղափարները: Նրա յորգորները մեծ

ազդեցութիւն ունեցան, յոյն յեղափոխականները փոխեցին գործունէութեան նախկին ձեր—(օտար պետութիւնների միջոցով ազատութիւն ձեռք բերել) և սկսեցին ազատութիւնը որոնել իրանց սեպհական լեռներում, իրանց ծովերի վրա, առևտրական նաւերը զինուորական նաւեր դարձնելով, պալիկարներին (լեռնային տւազակ) և ծովային հէներին ազնուացնելով և նրանցից կազմելով հայրենասէրներ—ազատութեան և խաչի պաշտպաններ:

Այդ միւնցն ժամանակ օրէցօր աւելանումէին յունական ուսումնարանները: Օգեսսայում և ուրիշ հեռաւոր տեղերում ապրող յշները նիւթական նպաստներ էին տալիս: Շուտով ծաղկած դրութեան հասան Աթէնքի, Սալոնիկի, Զմիւռնիայի, Տիրովի, Պարոսի, Անդրոսի և Պատմոսի դպրոցները: Յոյն ուսուցիչները մարդարէնների նման անգամար ըքջում էին դէս ու դէն, ժողովրդին ծանօթացնում էին պատմութեան հետ և արծարծում ազատութեան գաղափարները:

Այդ գործունէութիւնը ունեցաւ զօրեղ հետեանք: Անցաւ մի քանի ժամանակ... Յոյն ժողովուրդը արթնացաւ ստրկութեան քնից: Այսպէս օրինակ, երբ յշն նաւաստինները վտանգաւոր ձանապարհորդութիւնից տուն էին վերադառնում և տեսնում էին իրանց թշուառ վիճակը, ամաչելով հարցնում էին միմեանց, թէ ինչո՞ւ իրանք, որ թագաւորում են ջրերի վրա, տանը դարձեալ ստրկութեան են ենթարկուած. իսկ նաւապետները շարունակ կրկնում էին Թէմիստոկլի խօսքերը՝

«մենք կունենանք աղատ երկիր ու հայրենիք, քանի որ ունենք 200 զինաւորուած նաւեր»:

Գ.

Մինչև 1812 թուականը յոյները գրեթէ ոչ միշտափոխական կազմակերպութիւն չունեին: Մինչև այդ ժամանակ նրանց գործունէութեան զեկավարը այս կամ այն անհատն էր լինում: Սակայն 1812 թուականին Աթէնքում առաջին անգամ հիմնուեց մի հետերիա—(ընկերութիւն)՝ «Մուսաների բարեկամներ» մականունով: 1814 թ. Նիկողայոս Սկուֆաս անունով մի յոյն վաճառական նոյն տեսակ հետերիա հիմնեց նախ Օդեսսայում և ապա Մոսկուայում:

Ցունական հետերիաները խորհրդաւոր կազմակերպութիւն ունեին: Նրանց բոլոր անդամները բաժանուած էին ութը աստիճանի և ամեն մի աստիճանը իր որոշ գերն ու անունն ունէր: Օրինակ առաջին աստիճանի անդամները կոչվում էին «աշակերտներ», չեին իմանում ընկերութեան նոյն իսկ զինաւոր նպատակը և չեին ձանաշում բարձրաստիճան անդամներին: Նրանց միակ պարտականութիւնն էր զբնը և ուրիշ իրեղներ պահելը: Երկրորդ աստիճանի անդամները կոչվում էին «զոհաբերներ» և պարտաւոր էին հարկաւոր գէպքում կառւի գուրս գալ մահմեդականների գէմ: Դրանց առաջնորդները կոչվում էին «հովեւներ» և պատկանում էին երրորդ աստիճանին: Վեր-

ջապէս «ընտրեալները» պատկանում էին վեցերորդ աստիճանին, իսկ նրանց գլխաւորները եօթներորդ աստիճանին: Ութերորդ աստիճանը իր մէջ պարունակում էր բարձրագոյն իշխանութիւնը—ընկերութեան զլուկաը որը իսկապէս զոյութիւն չունէր, թէև ամեն մի ընտրեալի խորհրդաւոր ձեռվ հասկացնում էին, թէ այդ զլուկաը մի թագակիր անձնաւորութիւն է: Նատերը ենթադրում էին, թէ այդ անձնաւորութիւնը ուսւաց Ալէքսանդր կայսրն է: Այդ հետերիաները հետզհետէ ամեն տեղ տարածեցին իրանց մասնաձիւղերն ու կօմիտեները: Դրանց նպատակն էր փող հանդանակել զէնք և ուրիշ ուղղմաթերք գնել և ծայրայեղ գէպքում նոյն իսկ միայն սեպհական ոյժով սկսել կանոնաւոր ապստամբութիւն և առաջ տանել հայրենիքի ազատութեան գործը: Նրանք ամեն կերպ աշխատում էին իրանց հետ միացնել բոլոր հարուստ և մեծանուն յշներին: Այդպիսիների մէջ առաջին տեղն էին բոնում ուսւաց ծառայութեան մէջ զանող՝ կոմս Կապոդիստրիան (նախարար) և իշխան Ալէքսանդր Իպսիլանտին (գեներալ):

Յշները գաղտնիյանձնարարութեամբ Պետերբուրգ ուղարկեցին հետերիայի անդամ Կամիրինոսին, որպէս զի նա օգնութիւն խնդրէ նախ կոմս Կապոդիստրիայից և ապա նրա միջոցով Ալէքսանդր կայսրից: Սակայն Կամիրինոսը ձեռնունայն յետ վերադարձաւ և ամեն տեղ բարձրաձայն յայտնեց, որ ոչ մի յոյս չի կարելի գնել ոչ Կապոդիստրիայի և ոչ էլ Ռուսաց կառավարութեան վրա: Դրանից

յետոյ տիրեց անսպասելի յուսահատութիւն. Հիասթափուածներից շատերը հեռացան դործից... Վերջապէս բանը այնտեղ հասաւ, որ հետերիսի միւս անդամները կամիրինոսի կեանքը և այդ տեսակ քարոզութիւնը չափազանց վնասակար համարելով, վճիռ կայացրին և սպանեցին նրան. ապա յուսահատուած ժողովրդի վստահութիւնը նորից վերականգնեցնելու համար պատգամաւոր ուղարկեցին իշխան Իպսիլանտիի մօտ, Իպսիլանտին թէև մեծ շահ ունէր Թիւրք կառավարութիւնից—(նա շուտով յետ պիտի ստանար իր, մի քանի միլիոն արժողութեամբ, կալուածները)—բայց հայրենիքի սէրը ստիպեց նրան մասնաւոր շահը զոհել ազգի պահանջին, ազատութեան գործին։ Նրա հայր կոստանտին Իպսիլանտին երկար ժամանակ աշխատել էր Ռուսաստանից մի իրական օգնութիւն ստանալ յոյների համար, բայց մինչև վերջը անաջողութեան էր հանդիպել, ուստի և մեռնելիս կտակ էր արել իր որդիներին՝ կռուել հայրենիքի ազատութեան համար առանց մի որ և է յօյս դնելու օտարի օգնութեան վրա։ Մասամբ էլ այդ էր պատճառը, որ իշխան Իպսիլանտին մեծ ուրախութեամբ համաձայնեց յեղափոխական գործի զլուխն անցնելու։ Նա թողեց իր պաշտօնը և Պետերբուրգից ճանապարհ ընկաւ դէպի Օդեսա։ Սյդ ժամանակ հետերիաները գործելու զանազան ծրագիրներ էին կազմում։ Ոմանք առաջարկում էին՝ զինել Կ. Պօլսի բոլոր յոյներին, յանկարծակի յարձակուել այդ քաղաքի վրա, ողը ցնդեյնել զինանոցը, սպանել

սուլթանին մզկիթ գնացած ժամանակ և այդ բոլորից յետոյ շարունակել յաղթական արշաւանքը դէպի Պօլսուննես. մի քանիսն էլ առաջարկում էին ամբողջ Պօլսուն այրել։ Բայց աւելի խոհեմ և հեռատես մարդիկ այդ ծրագիրները անիրազործելի էին համարում և առաջարկում էին պարտիզանական (ասպատակային) կոփւ սկսել Յունաստանի բոլոր մասերում։

853 - 2013

Իպսիլանտիի առաջին գործն եղաւ՝ ոգեսորել յոյն ժողովրդին, տարածելով մի շինծու լուր, թէ ինքը գործում է ուռսաց կայսեր համաձայնութեամբ, թէ մարդասէր Ալէքսանդր Առ ուղում է նաև տեսնել իր «սիրելի յօյների» հերոսութիւնը և ապա ազատել նրանց զարաւոր ստրկութիւնից։ Սյդ լուրը իսկապէս մեծ ոգեսորութիւն առաջ բերեց... Կամաւորները մէկը միւսի յետեից հաւաքւում էին Իպսիլանտիի շուրջը։ Նրա հասցէով գրամական նուէրներ էին գալիս զանազան տեղերից։ Մի խօսքով կարձ ժամանակից յետոյ ամեն ինչ պատրաստ էր ապստամբութիւնը սկսելու համար։ Հարկաւոր էր միայն յարմար առիթ, որ և շուտով ներկայացաւ։ Ալի փաշայի յարուցածներքին խոսվութիւնները, սերբիական ապստամբութիւնը, թիւրք կառավարութեան կատարեալ սնանկութիւնը — աշա այն հանգամանքները, որոնք առիթ տուին յօյն յեղափոխականներին գործը սկսելու։

1821 թուականի Փետրուար ամսին բոլոր յունաքանակ տեղերում ապստամբութիւնը, մի սրտառուչ կոչ, որ վերջանում էր Հայութեալ բառերով.



«...Սիրելի Հեղմենը, յիշեցէք ձեր նախահայրերի հերոսութիւնը, ձեր այժմեան ստրկական վեճակը և զէնքի դիմեցէք ձեր կեանքն ու գյուբը պաշտպանելու համար, որովհետեւ մօտ է փրկութեան ժամը և արդէն հնչում է ազատութեան փողը...»

Վերջապէս 1821թ. Մարտի 6-ին իշխան Իակովիլանտին իր մի բուռն քաջերով անցաւ Պրուտ գետը և առանց դժուարութեան մատաւ Մոլդաւիայի եաշ քաղաքը, իսկ նրա ընկերակիցը—Թէոդորոս Վլադիմիրէսկօն իր խմբով տիրեց Բուկարեշտին։ Մի ուրիշ խումբ էլ Վասիլի Կարաւիայի առաջնորդութեամբ յարձակուեց Գալացի վրա։ Այդտեղի սակաւաթիւ մահմեդականները ընդդիմութիւն ցոյց տուին, սակայն յոյն յեղափոխականները կոտորեցին նրանց, քարուբանդ արին մղկիթը և սպանեցին Խմամին։ Այդ միենոյն ժամանակ սկսուել էր պարտիզանական կոիւր Մօրէայում՝ հետերիայի անդամ Կոլօկոտրինի առաջնորդութեամբ։ Ապրիլ ամսին էլ մի խումբ հերոսների հետ ապստամբեց Պատրասի Հերմանոս արքեպիսկոպոսը։ Նրա գյոնզզոյն դրօշակի վրա գրած էր. «յաղթութիւն կամ մահ» և անձնազոհ զինուորները մինչեւ վերջը հաւատարիմ մնացին այդ նշանաբանին։ Հերոս արքեպիսկոպոսը մէկ ձեռքին խաչ միւս ձեռքին գրօշակ առած առաջնորդում էր քաջամարտիկ ապատամբներին։ Միենոյն ժամանակ ազատութեան համար պատերազմում էին նաև Մայնայի բնակիչները։ Պետրոս Մավրոմիխալիի առաջնորդութեամբ։

Աշա այդպիս Յունաստանի զանազան մասերում հնչեց ապստամբութեան աւետարեր փողը և յոյն հայրենասէրները ուսի կանգնեցին։ Ակղբում գործը աջողութեամբ էր առաջ գնում, բայց շուտով վրա հասան մի շարք գժբաղդութիւններ... Խպսիլանտին բաւական փառասէր և մեծամիտ մարդ էր։ Նա իրան շրջապատել էր թագաւորավայել շուրջ և մեծամեծ ծախսեր էր անում, իսկ փող ձեռք բերելու համար դիմումէր զանազան բռնի միջոցների. օրինակ նրա հրամանով յեղափոխականները ձերբակալեցին Վալախիայի բանկիր Անդրէային և աղատեցին միայն յոն ժամանակ, երբ նա վճարեց մի մեծ գումար—իրեւ փրկանք։ Այդպիսի գէպերը ընդհանուր դժողովութեան առիթ էին դառնում։ Միենոյն ժամանակ յոյն յեղափոխականների մէջ էլ սկսուեցին ներքին խորվութիւններ, դաւաճանութիւն, մատնութիւն և այլն։ Բայց գործի անաջողութեան ամենամեծ հարուածը տուեց Ռուս կառավարութեան բռնած ընթացքը։ Եաշ քաղաքը տիրելուց յետոյ Խպսիլանտին յատուկ նամակ և պատզամաւոր ուղարկեց Ալէքսանդր կայսեր մօտ և խնդրեց նրա օգնութիւնը։ Կոմս Կապոդիստրիան, որ Խպսիլանտից պակաս հայրենասէր չէր, գրա վրա աւելացրեց իր ինդիրն էլ։

—Միթէ յոյները չեն կարող մի առժամանակ էլ սպասել, բացականչեց կայսրը։

—Ռէ Տէր իմ, պատասխանեց Կապոդիստրիան, նրանք լողումեն արեան գետերի մէջ, նրանք տանջում են նահատակների նման և չեն կարող մօտա-

ծել թէ երբ է իրանց փրկութեան յարմար ըոպէս:
— Ուրիշ կերպ անհնարին է, շարունակեց
կայսրը այժմ մի քանի դժբաղդ հանգամանքներ
արգելումն ինձ կատարել այն, ինչ որ թելադրում
են իմ սիրտն ու կրօնը:

Կայսեր ախարկած «դժբաղդ հանգամանքները» եւրոպական պետութիւնների անհամաձայնութիւնն էր: Այդ պետութիւններից Աւստրիան ամենազաժանը և քարասիրտն էր յունական հարցում:

Երբ յոյների «սրբազն զօրաբաժինը» իշխան իպսիլանտիի առաջնորդութեամբ մտաւ թիւրքական սահմանները, Աւստրիայի առաջին նախարար Մետերնիսը մի գրութիւն ուղարկեց ուստաց կայսերը: Նա չափազանցրած նկարագրում էր յոյն ապստամբների նպատակը և այն միտքն էր յայտնում, որ եթէ մի որ և է պետութիւն օգնութիւն կամ հաւանութիւն ցոյց տայ յոյն ապստամբներին, այն ժամանակ բոլոր գաղտնի ընկերութիւնները ասպարէզ կ'գան, եւրոպայում կ'տիրէ անիշխանութիւնը և ոչ մի պետութիւն կանգուն չի մնայ: Բացի դրանից նա ամեն հնարներ գործ էր գնում Կապոզիստրիային պաշտօնազուրկ անելու համար, որպէս զի վերջինս չ'կարողանայ ազգել կայսեր վրա՝ յօդուտ յօյների: Ահա այդ էր պատճառը, որ հայրենասէր կոմնը իրան շատ զգոյշ էր պահում և իր սրտի ցանկութեանը հակառակ մերժեց կետերիայի վերջիշեալ առաջարկութիւնը: Նա համոզուած էր, որ յօյները իրանց աղատութիւնը միայն Ուստաստանի օգնութեամբ կարող են ձեռք բերել

և ամեն ջան ու ձիգ գործ էր գնում, որպէս զի կայսրը շտապեցնէ իր անելիքը և վերացնէ նրանց սորկական լուծը:

Դժբաղզաբար Ալէքսանդր Ա. Համամիտ էր Մետերնիսի կարծիքին, ուստի և իշխան իպսիլանտիի նամակը ստանալիս չափազանց զայրացաւ, հրամայեց հրատարակելու որ Ռուսաստանը ոչ մի կապ չունի ապստամբների հետ և մինչեւ անզամ օգնութիւն առաջարկեց սուլթանին՝ խռովարար յօյներին ձնշելու և խաղաղեցնելու համար: Այդ ամենի բօթաբեր լուրը կայծակի արագութեամբ հաստա Յունաստան և սառը ջրի նման առժամանակ հանգցրեց հրդեհուած ապստամբութիւնը:

Թիւրք կառավարութիւնը քաջալերուեց: Նա ահազին զօրախմբեր հանեց ապստամբների դէմ կ. Պօլսում բանտարկեց բազմաթիւ հարուստ յօյների, մի շրջաբերական ուղարկեց զաւառները և գրգռեց թիւրք ամբոխի ֆանտատիկոսութիւնը: Յոյները յուսահատուեցին. կամաւորները մէկը միւսի յետեկից զէնքերը ցած էին գնում և հեռանում: Մնացածներն էլ հոգով ընկծուած էին: Վլադիմիրէսկօի խմբի բոլոր կամաւորները Թրատեչին դիւղի մօտ կոռւի ամենասաք ժամանակ թողին իրանց խմբապետին և փախան: Իպսիլանտիի խումբը երկու անզամ ընդհարում ունեցաւ թիւրք զօրքերի հետ և երկու անզամին էլ պարտութիւն կրեց: Վերջապէս նա իր մի բուռն ընկերներով փախաւ Աւստրիա, բայց Աւստրիական կառավարութիւնը ձերբակալեց նրան և ձգեց Մունկաչի

խոնաւ ու կեղտոտ բանտը: Եօթը երկար ու ձիգ տարիներ նա մնաց այդ դաժան բանտում և ազատուեց միայն 1820 թ.: Մակայն բանտային կեանքը քայրացել հալ ու մաշէր արել նրա կազմուածը, ուստի և ազատուելուց մի քանի ամիս յետոյ աւանդեց հոգին՝ առանց տեսնելու իր սիրած հայրենիքի վերջնական ազատութիւնը:

❖

Իպսիլանտիի բանտարկութիւնից և դրան հետեղ յուսահատութիւնից յետոյ շատերը կարծում էին, թէ յունական դրաման արդէն վերջացած է և յեղափոխական գործը ընդ միշտ դադարած: Մակայն դրանք չարաչար սիսալւում էին: Իդաքասի ոտանաւորները, Կօրայիսի սրտառուչ պրօպագանդան և հետերիաների գործունէութիւնը մի այնպիսի կայծ էին ձգել բոլոր յշների սրտերի մէջ, որը երբէք չէր կարող հանգել քանի որ ամեն տեղ չէր ծածանուել ազատութեան դրօշակը: Անաջող հանգամանքները կարող էին այդ կայծը մի առժամանակ մոխրի տակ ծածկած պահել բայց յետոյ նա նորից կ'բռնկուէր աւելի մեծ ոյժով: Եւ իսկապէս այդպիս էլ եղաւ: Առաջին գժբաղդութիւններից յետոյ յշները յուսահատուեցին, առժամանակ դադարեցին գործելուց, բայց շուտով նորից սկսեցին գործունէութիւնը՝ աւելի մեծ եռանդով, աւելի մեծ անձնազոհութեամբ: Ապստամբութիւնը բռնկուեց ամեն տեղ՝ թէ՛ Թեսսաղիայում, թէ՛ Մակեդոնիայում, թէ՛ Մօրէայում և թէ մանաւանդ Արխի-

պելագոսի կղզիներում: Այդ կղզիներից զլիաւորներն էին— Կրետէն, Հիգրան, Սպեցիան և Պարան:

Կղզիների բնակիչները առաջուց նախապատրաստուել էին, իրանց առեւտրական նաւերը զինւորական, նաւեր դարձնելով: Ապստամբութեան հէնց առաջին բոպէում գրանք դուրս բերին 167 զինւորական նաւակիներ, որոնց օգնութեամբ խլում էին թիւրքական ապրանքատար նաւերը և նրանց միջի մեծամեծ հարստութիւնները: Յունական նաւերի զլիին պսպղում էին խաչեր և ծածանւում զյնզգյն դրօշակներ, որոնց վրա խոշոր տառերով արձանագրուած էր. «ապարա-նէ ան կամ ճակ»: Այդ նաւերից կազմուեց մի նաւատարմիդ, որի հրամանատարութիւնը յանձն առաւ հիգրացի Յակոբ Տօմպազին: Մովային գործիչների մէջ նշանաւոր էր նաև մի կին՝ Բօրոլինա ազգանունով: Նրա ամուսնուն սպանել էին Կ. Պօլսի ենիշերիները. իսկ մի հատիկ որդին մեռել էր Արգոս կղզու պաշտպանութեան ժամանակ: Այդ գժբաղդութիւններից յետոյ հերոսուհին ծախել էր իր բոլոր ունեցուածքը, գնել էր երկու պատերազմական նաւ և մինչեւ պատերազմի վերջանալը ինքը անձամբ զեկավարում էր նրանց:

Յունական նաւատարմիդը անդադար լողում էր գէսուղէն, բաժանում էր զէնքեր և յարմար դէպում նոյն իսկ յարձակումներ էր գործում թիւրքական նաւերի վրա: Հետզէտէ միւս կղզիներն էլ միանում էին վերսիշեալ ապստամբների հետ: Մինչեւ անդամ ասիական տփի ամենամեծ

կղզիներից մէկը—Սամոսը պարզեց անկախութեան դրօշակը, երբ այդտեղ երևացին «Հելլենների ազատութեան» համբաւաբեր նաւակները:

Այդ վըգովեցուցիչ լուրերը միմիանց յետեից հասնում էին կ. Պօլիս և մեծ զարցոյթ պատճառում սուլթանին ու նրա խորհրդականներին: Դրանք կարծում էին, թէ ապստամբութեան առաջը կարելի է առնել բռնի միջոցներով՝ ուստի զաղանի և յայտնի հրամաններով կոտորել էին տալիս անդէն յոյներին, աւերռում էին նրանց եկեղեցիներն ու սրբութիւնները:

Վերջապէս Բ. Դուռը հրամայեց յունաց Գրիգորիոս պատրիարքին մի շըջաբերական կոնդակով նզովել բոլոր յեղափոխականներին: Հրամանը կատարուեց, կոնդակը կարդացուեց բոլոր յունական եկեղեցիներում, սակայն նրա հետեանքը միայն այն եղաւ, որ յօները աւելի սաստկացրին իրանց ատելութիւնը դէպի կառավարութիւնը: Երբ յունական ապստամբութիւնը լուրջ բնաւորութիւն ստացաւ և վտանգ էր սպառնում Թիւրքիայի ամբողջութեանը, այն ժամանակ Ելղզքեօշկուր տեղի ունեցան մի շարք ժողովներ ու խորհրդածութիւններ: Դրանց եղրակացութիւնը եղաւ այն, թէ ապստամբութիւնը կարող է առաջ գալ միայն այն մարդկանց թելազրութեամբ, որոնք ազգեցութիւն ունեն ամբոխի վրա: Այդ պատճառով բոլոր քաղաքներում բանտարկեցին համբեարների զլաւորներին և հարուստ յոյներին: Մարտի 23-ին ենիշերիները մեծ կոտորած առաջ բերին կ. Պօլում:

Ապրիլի 5-ին կողոպտեցին և այրեցին Բօսֆորի վրա գտնուած յունական գիւղերը... Իսկ երբ հասաւ Պելոպնիսի ապստամբութեան լուրը, մահմեդական ամբոխի կատաղութիւնը այն աստիճանի հասաւ, որ զատկի տօնի օրը (Ապրիլի 23-ին, 1821թ.) պատրիարքին քաշընվով դուրս բերին եկեղեցուց և ձեռքերը մէջքին կապելով պատրիարքարանի դռան վրա կախեցին: Այդ միւնոյն վիճակին ենթարկուեցին մայրաքաղաքի միւս թաղերում Եփեսոսի, Անքիլոսի և Նիկոմիդիայի միարոպոլիտները և ուրիշ ութը բարձրաստիճան հոգեորականներ: Սուլթանը մեծ վեզերի առաջնորդութեամբ եկաւ անձամբ տեսնելու պատրիարքի դիակը, իսկ աւելի մեծ անպատճեան համար հրէաներին հրամայեց դիակը քաշընվով փողոցների միջով և ապա ծովը ձգել: Այդ գաղանային վարմունքը աւելի զրգուց յօներին, արատաւորեց սուլթանի անունը և սարսափելի վրէժինդրութեան նշան տուեց ամբողջ Բիւզանդիայում: Մայրաքաղաքի անվթութիւնները կրկնուեցին զաւառներում: Ալգրիանապօլիսի Կիւրեղ պատրիարքը և մի քանի նշանաւոր յոյներ մահուան պատիժ ստացան: Այնոսի, Կիպրոսի, Զմիւռնիայի և Կրետէի բնակիչները սարսափելի բռնութիւնների ենթարկուեցին: Թիւրքերը ոչխարների նման մորթուում էին յօներին, առանց խնայելու նոյն իսկ կանանց ու երեխաներին: Այդ բոլոր գէպքերը մեծ յուզմունք առաջ բերին եւրոպական ազգերի մէջ, որոնք արգէն վըգովուած էին «զատկական չարագործութեամբ».

բայց մեծ պետութիւնները դարձեալ անորոշ և երկմիտ դիրք էին բռնել և շարունակ կրկնում էին, թէ եւրոպայում ընդհանուր հաւասարակշռութիւն պահպանելու համար անհրաժեշտ է պահել Թիւրքիայի status quo-ն: Խոկ Մետերնիսը իր միապետի հետ դարձեալ պնդում էին, թէ հարկաւոր է ոչ թէ օգնել յոյներին և պաշտպանել նրանց դատը, այլ ընդհակառակը պէտք է ճնշել և պատժել այդպիսի ըմբոստ հպատակներին: Միիթարականը միայն այն էր, որ Ռուսաստանի քաղաքականութիւնը հետզհետէ փոխւում էր յօդուա յոյների: Բ. Դուռը նկատում էր այդ, բայց դարձեալ շարունակումիր անտակտ վարմունքը... Թիւրք պաշտօնեաները մեծ յանդգնութեամբ խուզարկում էին ռուսաց նաւերը և շարունակաբար հալածում, անպատում ռուսաց դեսպանատան ծառայողներին:

Ստրօգանովը (ռուսաց գեսաբան) ի զուր էր պահանջում, որ թիւրք զօրքերը յետ կանչուին Մոլդավիայից և Վալաքիայից, ի զուր էր բոլոքում կատարուած չարազործութիւնների դէմ: Բ. Դուռը կամ անպատասխան էր թողնում նրա պահանջները կամ հեգնական գրութիւններ ուղարկում:

Վրա հասան Ռամազանի օրերը. մայրաքաղաքում լուր տարածուեց, թէ մահմետական ամբոխը պէտք է յարձակուի ռուսաց դեսպանատան վրա: Ստրօգանովը այլես համբերել չը կարողացաւ. նա իր բոլոր ծառայողների հետ հեռացաւ Կ. Պօլսից (Օգոստոսի 10-ին) և այդպիսով ընդհատուեցին Ռուսաստանի ու Թիւրքիայի քաղաքական յարա-

բերութիւնները: Երկու պետութիւնն էլ սկսեցին պատերազմի պատրաստութիւն տեսնել: Կոմս Կապոդիստրիան աշխատում էր շտապեցնել այդ պատերազմը, որ պիտի որոշէր Յունաստանի բաղդը: Մի անգամ երբ նա յայտնեց իր կարծիքը այդ մասին, կայսրը պատասխանեց.

— Այո, անհրաժեշտ է պատերազմել և ազատել յոյներին, բայց այդ բանը պէտք է անել միւս պետութիւնների կատարեալ համաձայնութեամբ:

— Զերդ Մեծութիւն, պատասխանեց կոմսը, ընդհանուր համաձայնութիւն ստանալու յօյսով դուք կ'կորցնէք յարմար ժամանակը: Յեղափօխութիւնը այնպէս կ'տարածուի, որ այլես անհնարին կ'լինի նրա առաջն առնել: Դուք այժմ հեշտութեամբ կարող էք Դանուբի ափերից կարգաւորել արեւելքի գործերը և ամբողջ Եւրոպան, տեսնելով Զեր անշահասէր և բարերար քաղաքականութիւնը, իսկոյն կ'տայ իր հաւանութիւնը. այն ինչ սպասելով և պաշտօնական թղթեր գրելով Դուք բացի վմասից ոչ մի օգուտ չէք ունենայ: Դժբաղդաբար կապոդիստրիայի խօսքերը ոչ մի ազգեցութիւն չ'ունեցան և կայսրը չ'փոխեց իր համոզմունքը: Միւս կողմից էլ Անդիխան ու Աւտրիան սպասնացով պատերազմի վկասակար հետեանքները նախատեսնելով և Ռուսաստանի անշահասէր քաղաքականութեանը հաւատ չ'ընձայելով, միջամտեցին և Թիւրքիային ստիպեցին վերականգնեցնել ընդհատուած քաղաքական յարաբերութիւնը Ռուսաստանի հետ: Ահա այդպէս ռու-

սայ պատերազմական միջամտութիւնը յունական գործում յետաձգուեց և յոյն ապստամբները նորից իրանց ձակատադրին յանձնուեցին:

Յ.

Յոյները իրանց սեպհական ոյժերով, սեպհական զոհաբերութիւններով պիտի ապացուցանէին, կան զոհաբերութիւններով պիտի ապացուցանէին, որ արժանի են աղատութեան, արժանի են անկառութեան: Նրանք ձակատ առ ձակատ պատերազմութեան: Նրանք ձակատ առ ձակատ պատերազմութեան: Ենթադրութիւն էին տասնեակ ու հարիւր մում էին թիւրքիայի գէմի տասնեակ ու հարիւր հազարներով զոհեր էին տալիս, բայց դարձեալ առանց յուսահատուելու շարունակում էին գործը: Ամբողջ Յունաստանը մի պատերազմական դաշտ էր ներկայացնում: Սար ու ձոր, դաշտ ու հովիտ էր ներկուած էին անմեղ զոհերի արիւնով: Երկրի մի ներկուած էին անմեղ զոհերի արիւնով: Երկրի մի ներկուած էին ապստամբների ձեռքն էր անցել: Գրեմասը արդէն ապստամբների ձեռքն էր անցել: Գրեմասը յունաբնակ կղզիները, բացի Տէնոսի, թէ բոլոր յունաբնակ կաթոլիկներից, իրանց ազատ Սիրայի, և նաքսոսի կաթոլիկներից, իրանց ազատ էին հրատարակել: Ապստամբութեանը մասնակից էին հրատարակել: 1821 թ. Տոկտեմբերի 5-ին յոյչէր և Քիոս կղզին: 1821 թ. Տոկտեմբերի 5-ին յոյչէր տիրեցին Մօրէայի զինաւոր քաղաքին—Տրիները տիրեցին Մօրէայի զինաւոր քաղաքին—Տրիները կոտրեցին մօտաւորապէս 10,000 պոլիցային և կոտրուեցին մօտաւորապէս 10,000 թիւրքերի: Ալբանիայում թափառում էին քաջութիւնաների խմբերը՝ Մարկոս Բոցարիսի առաջնորդութեամբ: Թէսսաղիայում կուռում էին քաջանորդութեամբ: Մարտիկ կամաւորները՝ 0դիսսէյի զեկավարութեամբ: Աթէնքը նոյնպէս յեղափոխականների ձեռքումն էր և հարկերը հաւաքւում էին, թէև ոչ կանոնաւոր և հարկերը հաւաքւում էին, թէև ոչ կամքագով ոչ թէ թիւրքիայի, այլ ապստամբների

օգտին: Բայց Թիւրք կառավարութիւնն էլ քնած չէր... Սուլթան Մահմուդը ապստամբութեան գրւիսաւոր կենարունը—Մօրէա ուղարկեց իր ամենածարտար փաշային—Ղուրշեղին, որը մի քանի տարի առաջ Տաւրոսի լեռները ներկել էր Զէյթունցի հայերի արիւնով և թէլլրագում մի մեծ բուրգ էր շինել աղատութեան համար նահատակուած սերբերի զլուխներից: Այդ գաղանասիրտ փաշան մեծ մեծ յոյսերով մտաւ Մօրէա, բայց հէնց առաջին ընդհարման ժամանակ զգաց իր հակառակորդի առաւելութիւնը: Եւ միթէ անկարգապահ ու միայն աւարի համար կուռող թիւրքերը կարող էին յաղթել աղատութեան վեհ գաղափարով առզորուած յոյներին: Միթէ կոպիտ ոյժը կարող էր հանդցնել աղատութեան բնատուր կայծը. միթէ բոնակալը կարող էր նորից իր ծիրանների մէջ առնել այն երկիրը, որի ամեն մի քարը, ամեն մի թուփը կենդանի բողոք էր արտայայտում: Աշն ու սարսափը բոլորովին վերացել էին յոյների միջից: Օրէցօր աւելանում էին հայդուկային խմբերը: Ամեն մի աղդեցիկ յոյն աշխատում էր մի զինաւորուած խումբ կազմել գիւղացիներից, հովիւներից և աւազակներից և երբ խումբը արդէն պատրաստ էր լինում, նա հրամանատար էր գառնում և գործում իր պատ կամքով:

Ապստամբների խմբերը չունէին մի ընդհանուր կապ, ընդհանուր հրամանատար: 1820 թ. Յունիս ամիսին յօ կամաւորների հետ Մօրէա եկաւ Դիմիտրիոս Իպսիլանտին—Ալէքսանդր Իպսիլանտիի

եղբայրը: Բոլորը նրան գրկաբաց ընդունեցին և արխիստրատիդ, այսինքն ընդհանուր հրամանատար հրատարակեցին: Դրանից յետոյ յոյները աւելի մեծ եռանդով սկսեցին կռուել: Շուտով նրանց ձեռքն անցաւ Մոնէնբազիս և Նաւարին քաղաքները: Ազատուած երկիրների համար անհրաժեշտ էր մի օրինաւոր կառավարութիւն: Դժբաղպարար դրա պատճառով առաջ եկան երկարատև երկպառակութիւններ:

Դիմիարիսս Խպսիլանտին և Սլէքսանդր Մաւրոկորդատօն միմեանց ախոյեան հանդիսացան: Դրանցից իւրաքանչեւրը աշխատում էր իր ձեռքն առնել կառավարութեան զեկը: Վերջապէս 1822 թ. Յունուար ամսին նախ Սրգոս քաղաքում և ապա Պիագայում (նախկին Եպիստաւրոսի մօտ) գումարուեց ազգային ժողով, որը կազմեց առաջին յունական սահմանադրութիւն (110 յօդ. բաղկացած), հանդիսաւոր կերպով հրատարակեց Յունաստանի ազատութիւնը և մինչև կռուի վերջանալը սահմանեց հասարակապետական կառավարութիւն: Վարչական իշխանութիւնը յանձնուեց հինգ հոգուց բաղկացած մի մասնաժողովի՝ Մաւրոկորդատօի նախագահութեամբ, իսկ օրէնսդրականը՝ 70 պատգամաւորներից կազմուած ժողովին՝ Խպսիլանտիի նախագահութեամբ:

Նորակազմ կառավարութիւնը պատրաստեց մի գունդ հետեւակ զօրքերից (տակտիկներ) և մի գունդ էլ Եւրոպայից Եկած հելենասէրներից: Երկրորդ գնդի հրամանատարութիւնը յանձնուեց Վիրտեմ-

բերգցի գեներալ Նորմանին, որը իր 64 սպաների հետ եկել էր յունական ազատութեան համար կռուելու: Դժբաղպարար ապստամբութեան գործը բաւականին տուժեց Ալի փաշայի յաղթուելուց: Սյդ 84 տարեկան ծերունին սուլթանի ամենասոխերիմ թշնամին էր և մեծ խառնակութիւն էր առաջ բերել Ալբանիայի մի մասում: Երկար ժամանակ նա դիմադրում էր թիւրք զօրքերին և դրանով (թէև անզիտակցօրէն) նպաստում յցն ապստամբներին: Սակայն նրա ոյժերը հետզետէ նուազում էին, ուստի և վերջապէս սահպուած եղաւ պատսպարուել Եանին բերգում: Սուլթանի զօրքերը Զերչիդ փաշայի առաջնորդութեամբ պաշարեցին բերգը: Ալի փաշան, Զերչիդի խոստումներից խաբուելով, անձնատուր եղաւ: Նրա զլուխը իսկոյն կտրեցին և կ. Պօլիս ուղարկեցին՝ ի մեծ ուրախութիւն սուլթանի և նրա գաղանասիրտ խորհրդականների: Դրանից յետոյ Զերչիդ փաշան ստիպուած էր կէս տարի շարունակ կռուել քաջ սուլիոտերի հետ, որոնք թոյլ չէին տալիս նրան Յունաստանի խորքերը մտնելու: Սյդ հանգամանքից օդառուելով, յոյները գրաւեցին Նավպիլիայի, Կորնթոսի և Աթէնքի բերգերը:

Մավրոկորդատօն 4000 զինւորների հետ շտապում էր սուլիոտերին օդնելու: բայց Պետա գիւղի մօտ յոյները պատահեցին թիւրքական զօրքին (10,000): Տեղի ունեցաւ սոսկալի կռիւ: Յոյներից կոտորուեցին մօտ 1500, իսկ թիւրքերից 7000 հոգի: Վրա հասաւ մութ զիշերը: Մաւրոկորդատօն օդ-

տուեց զրանից և շարունակեց ձանապարհը, բայց գարձեալ 2—3 անգամ ընդհարում ունեցաւ և բաւականին զոհեր տուեց: Հիւսիսից էլ առաջ էր շարժւում Մարկոս Բոցարիսը՝ իր քաջամարտիկ սուլիոտների հետ: Այդ երկու գաշնակից հերոսները ուղղում էին միանալ և ընդհանուր ոյժով դիմադրել հզօր թշնամուն: Բայց ամեն մի քայլափոխում հանդիպող թիւրք զօրքերը կոտորեցին, ոչնչացրին նրանց ոյժերը, այնպէս որ Բոցարիսը 35 զինւորներով և Մավրոկորդատօն 25 զինւորներով հաղեւ կարողացան պատսպարուել Միսալունգի քերդում: Շուտով 0մեր Վրիօնէի և Խւսուֆ փաշյի 11000 հոգուց բաղկացած զօրաբանակը պաշարեց այդ բերդը: Քրիստոնեայ հերոսները որոշեցին մինչեւ վերջին շունչը դիմադրել և երբէք անձնատուր չ'լինել: Ժամանակ շահելու նպատակով Բոցարիսը բանակցութիւն սկսեց Խւսուֆ փաշյի հետ: իսկ այդ միջոցին այս ու այն կողմից յոյները գաղտնի ձանապարհով խումբ-խումբ մտնում էին բերդը, իրանց հետ տանելով ուտեստի պաշար և ռազմամթերք:

Բանակցութիւնները ի հարկէ ոչ մի հետեւանք չ'ունեցան, ուստի և Մավրոկորդատօն ու Բոցարիսը 360 ամենաքաջ զինւորներով գիշերուայ կիսին յարձակուեցին քնած թիւրքերի վրա: Թիւրքերը, այդպիսի յանկարձակի յարձակումից շփոթուելով, փախուստի դիմեցին և քրիստոնեաներին թողին իրանց ամբողջ պաշարն ու մի քանի թնդանօթներ: Այդ բանը պատահեց 1823թ. Յունուարի 12-ին: Թիւր-

քերը իրանց գազանութիւնները շարունակեցին յարմար տեղերում: Շուտով քրիստոնեայ աշխարհը ցնցուեց և սարսափահար եղաւ, լսելով Քիոսի կոտորածը: Այդ հարուստ կղզին թէւ մինչեւ վերջն էլ մասնակից չէր ապստամբութեանը, բայց թիւրքերը յարմար համարեցին նրան էլ պատժել: Թիւրքական նաւատորմիղը Ղարա-Ալի փաշայի առաջնորդութեամբ մօտեցաւ Քիոսի ափերին: 7000 զինւորներ ափն իջան և սկսեցին անխնայ կերպով կոտորել անզէն, անպաշտպան քիոսցիներին: Երբ անմեղ զոհերը տասնեակ հազարներով լողում էին արեան գետերի մէջ, երբ կղզին արդէն զրկուել էր իր բնակիչների մեծ մասից, այն ժամանակ եղեռնագործ փաշան մի մեծ խնջյը սարքեց նաւերի վրա, որպէսզի տօնէ իր գաղանացին քաջազործութիւնը:

Քիոսի առաջն կոտորածի բօթաբեր լուրը կայծակի արագութեամբ հասաւ յեղափոխականներին և նրանք շտապեցին իրանց հայրենակիցների վրէմբ լուծել: Փորձառու ծովագնաց կանարիսն ու Պեպինը իրանց 33 ընկերներով (2 նաւակով) ծածուկ մօտեցան թիւրքական նաւատորմիղին և այրեցին ծովագետի նաւը: Խնջյըը խանգարուեց Ղալա-Ալի փաշան իր 2000 ընկերներով ծովի անդունդը սուլզուեցին: Սակայն այդ վրիժառութիւնը թանկ նստեց յոյների վրա: Կատաղած թիւրքերը կոտորեցին կղզու մնացած բնակիչներին էլ: Իր հարստութեամբ հաշակուած Քիոսը զրեթէ բոլորովին ամայի դարձաւ. նրա հայր-ը հազար բնակչութեան հայր հասպար ո-ը հայր հազար բնակչին:

1823թ. Փետրուար ամսին յոյները նորից գումարեցին ազգային ժողով՝ որին մասնակցում էին զինւորական առաջնորդները (Խպահլանտի, Օդիսսէյ, Կօլկօտրօնի Մաւրոկորդատո և այլն) և զանազան քաղաքների ներկայացուցիչներ: Մի քանի խորհրդածութիւններից յետոյ ժողովականները երկու բանակի բաժանուեցին: Մի կողմում քաղաքների ներկայացուցիչներն էին, որոնք պահանջում էին հիմնել խիստ կենարոնական կառավարութիւն և կանոնաւոր պատերազմի կերպարանք տալ ապստամբութեանը: Միւս կողմում զինւորականներն էին, որոնք պնդում էին, թէ հարկաւոր է շարունակել պարտիզանական կոիւր նախկին ձեռվ և ազատուած երկրի իւրաքանչեւր մասում նշանակել մի զինւորական կառավարիչ անսահման իրարաւունքներով: Երկու կողմի հակառակութիւնը այն աստիճանի հասաւ, որ ժողովներն ընդհատուեցին և իւրաքանչիւրն առանձնապէս աշխատեց իր խօսքն առաջ տանել: Սակայն քաղաքացիների խումբը մեծամասնութիւն էր կազմում, ուստի և տարաւ վերջնական յաղթանակը: Նորակազմ կառավարութեան նախագահ ընտրուեց նրանց կողմնակից Պետրոս Մավրոմիխալին: Դժողների պարագլուխն էր Կօլկօտրօնի: Դրանք էլ մի ուրիշ կառավարութիւն հիմնեցին կոնսուրիոտի նախագահութեամբ: Սկսուեցին ներքին կոիւներ, երկպառակութիւն և արիւնչեղութիւն, որ ջլատում էր ապստամբների ցիցերը: Օրինական կառավարութիւնը Անգլիայի բանկիրներից մի մեծ փոխառու-

թիւն անելով կրկնապատկեց իր նիւթական ոյժը և վերջապէս ձնշեց, ոչնչացրեց դժողների խմբին: Կօլկօտրօնի ենթարկուեց բանտարկութեան (Հիդրակղզում): Օդիսսէյը դաւաճանեց, անցաւ թիւրքերի կողմը բայց շուտով զերի ընկաւ յշների ձեռքը և մեռաւ բանտի մէջ: Այդպիսի երկպառակութիւնները կարող էին բոլորովին մեռցնել ապստամբութիւնը, եթէ թիւրք կառավարութիւնը ինչպէս ասում են «իր գլուխը կորցրած չլինէր»... Ամբողջ Թիւրքիայում տիրում էր բարելոնեան խառնակութիւն. հարկերը չէին հաւաքւում, պաշտօնեաները ռոճիկ չ'ստանալու պատճառով հրաժարում էին ծառայելուց, գանձարանում փողչկար, այնպէս որ սուլթանը ստիպուած էր հրաւէր կարգաւ իր հաւատարիմ հպատակներին, որպէս զի նրանք 'ի սէր Ալլահի, 'ի սէր Մահմեդի գերեզմանի նիւթականապէս օգնեն պետութեանը՝ անհրաժեշտ ծախսերն հոգալու և ապստամբ «զեպավուրներին» պատժելու համար: Յոյները աներկիւղ վստահութեամբ շարունակում էին իրանց հերոսական կոիւր: Ոչ Թիւրքիայի ահեղ ոյժը, ոչ մահմեդականների անասելի եղեռնազործութիւնները և ոչ էլ քրիստոնեայ պետութիւնների անտարբերութիւնը չէին վհատեցնում անձնազոհ քաջերին: Ամբողջ Եւրոպայում դեռ տիրում էր յունատեաց Մետերնիխի քաղաքականութիւնը, ուստի և երբ Վերօնում տեղի ունեցած զեսպանաժողովին ներկայացան Յունաստանի պատղամաւորները (Կոմա Մետակսաս և Փրանսիայի Ժուրգէն) օգնութիւն

խնդրելու, պետութիւնների ներկայացուցիչները
նրանց լսել անգամ չ'ուզեցին և արհամարանքով
ձանապարհ դրին: Բայց ինչ որ չէին ուզում անել
պետութիւնները, անում էին նրանց մարդասէր
հպատակները, որոնք չէին կարող անտարբեր աշ-
քով նայել Յունաստանում հոսող արեան գետերի
վրա: Անզլիայում, Գերմանիայում, Ռուսաստանում;
Ֆրանսիայում, Իտալիայում և մինչև անգամ հե-
ռաւոր Ամերիկայում կազմուել էին կօմիտեներ,
որոնք յօյների օգտին փող էին հանգանակում և
կամաւորներ ուղարկում: Բազմաթիւ եւրոպացի-
ներ շտապում էին միանալ նահատակւող յօյների
հետ, որպէսզի փրկեն նախնի քաղաքակրթութեան
և ազատութեան որրանը—Յունաստանը: Դրանցից
ամենանշանաւորն էր անզլիացի տիեզերահռչակ բա-
նաստեղծ լորդ Բայրոնը, որը 1823 թ. վերջում
թողեց Վենետիկի Ս. Ղաղարու վանքը, որտեղ՝ Հայր
Յարութիւն Աւգերեանի մօտ հայերէն էր սովոր-
ում, և գնաց Յունաստան: Իր բարեկամ Մավրո-
կորդատչի խորհրդով նա 1824 թ. Յունուարի 5-ին
մտաւ ուղղակի Միսսոլունգի, որը պաշարուած էր
թիւրքական զօրքերով: Բայրոնի գալուստը մեծ
ոգեսորութիւն առաջ բերեց յօյների մէջ: Մարդա-
սէր բանաստեղծը իր սեպհական միջոցներով 300
սուլիուաներից բաղկացած մի գունդ կազմեց և ին-
քը հրամանատար դարձաւ: Դժբաղվաբար շուտա-
փոյթ մահը (1824 թ. Փետրուարի 19-ին) թոյլ
չ'տուեց նրան կատարելու այն, ինչ որ շատերը սպա-
սում էին: Մարդասէր բանաստեղծի վերջին խօս-

քերն էին «Իմ քոյր... իմ մանկիկ... խղճուկ Յու-
նաստան... Ես տուի նրան իմ ժամանակը, հարս-
տութիւնը, առողջութիւնը, այժմ էլ տալիս եմ
իմ կեանքը»:

Բայրոնի անձնազոհութիւնը մեծապէս նպաս-
տեց ազատութեան գործի աջողութեանը: Յոյների
համար մի ուրիշ աջող հանգամանք էլ այն էր,
որ մեռաւ լորդ Լօնդոնդերըին (Կէստլի) և Անդ-
լիայի արտօքին գործերի նախարարութիւնը ան-
ցաւ լորդ Կանինզի ձեռքը, որ վաղուց արդէն յայտ-
նի էր իր յունաստիրութեամբ: Դրա ջանքերով վեր-
ջապէս 1823 թ. Անզլիան առաջինը պաշտօնապէս
հրամարակեց, որ յօյները ոչ թէ ապստամբներ են,
այլ մի պատերազմող պետութիւն: Այդպիսով Եւ-
րոպայի առաջնակարգ պետութիւններից մէկը ըն-
դունեց Յունաստանի անկախութիւնը:

Զ.

Վրա հասաւ 1824 թուականը: Անհաւասար
կուր փոփոխակի աջողութեամբ շարունակումէր:
Այլևս հաշտութեան մասին մտածել անգամ չէր
կարելի: Յունաստանը կամ պէտք է իր վերջնական
ազատութիւնը ստանար կամ մի ամայի աւերակ
դառնար: Թիւրքիայի դրութիւնն էլօրհասական էր:
Սուլթան Մահմուդը ուղում էր զինւորական վե-
րանորոգութիւններ մացնել իր պետութեան մէջ,
բայց գաղանքաբարոյ ենիչերիները արգելք էին լի-
նում այդ բանին և ժամանակ առ ժամանակ խառ-

նակութիւններ առաջացնում*): Այդպիսի ծանր հանգամանքներից ստիպուած սուլթանը դիմեց իր ամենավտանգաւոր վասսալի՝ Եգիպտոսի փոխարքայի օգնութեանը և առաջարկեց նրան ծովային և ցամաքային զօրքերի հրամանատարութիւնը: Եգիպտոսի փոխարքան—Մահմեդ Ալի փաշան իր տասնշինգամեայ խելացի գործունէութեամբ այնպէս էր զօրեղացել, այնպիսի կանոնաւոր զօրք և նաւատորմիղ ունէր, որ գրեթէ անկախ էր Բ. Դոնից և գեռ սպառնում էր նրա երկիրներին էլ տէր դառնալ: Այդ բաները շատ լաւ զիտէր սուլթանը, բայց նա ընտրել էր երկու չարեաց փոքրագոյնը, այսինքն քրիստոնեայ թշնամու դէմհանել էր մահմեդական հակառակորդին: Խորամանկ փաշան ուրախութեամբ համաձայնեց սուլթանի առաջարկութեանը, որովհետեւ դրա փոխարէն պիտի ստանար կրետէ և կիպրոս կղղիները և իր որդեգիր իբրահիմ փաշան էլ Մօրէայի փոխարքայ պիտի նշանակուէր:

1823 թ. վերջում Եգիպտական նաւատորմիղը մօտեցաւ կրետէի ափերին: Զօրքը ափ իջաւ և սկսեց թալանել, այրել և կոտորել: Հերմէսի այրում թագնուել էին 500 կանայք և երեխաներ: Եգիպտացիները այրի առաջ մի մեծ խարոյկ վառե-

*). Ծանրի. — Ենիշերիների ըմբոստութիւնը հասաւ այն աստիճանի, որ սուլթան Մահմուդը 1826 թ. Յուլիսի 17-ին հրաման արձակեց նրանց բոլորին կոտորել: Հրամանը կատարուեց բոլոր ենիշերիներին սպանեցին և ծովը ձգեցին: Այդ իրողութիւնը զգալի կերպով թուլացրեց Թիւրքիայի զինուրական ոյժը: Շուտով սուլթանն էլ զգաց իր սիալը, բայց արդէն ուշ էր:

ցին և ծխով խեղդեցին թագնուած թշուառներին: Այդպիսի գաղանութիւնները կրկնուեցին կղզու միւս մասերում էլ:

1824 թ. թիւրքերը Խոսրով փաշայի առաջնորդութեամբ պաշարեցին Պսարա կղզու գլխաւոր քաղաքը, որտեղ միայն 600 յոյներ էին մնացել: Երկու օր շարունակ գիմաղրեցին յոյները և երբ նրանցից միայն 200 հոգի մնացին, այն ժամանակ պայթեցրին միջնաբերդը և իրանց հետ միասին աւերակների տակ թաղեցին նաև 2000-ի չափ թիւրքերի: Բայց վերջ ի վերջոյ ամբողջ կղզին ամայի-աւերակ դարձաւ. նրա 17,000 բնակիչներից մնացին միայն մի քանի տասնեակ: Միւսները կամ կոտորուեցին կամ գերի ընկան:

Վերջապէս 1824 թ. ամառուայ սկզբում իբրահիմ փաշան Եգիպտոսի զինւորական ոյժերը—(20,000 զօրք և բաղմաթիւ նաւեր) շարժեց դէպի Յունաստանի սահմանները: Այդ դաժան փաշան վճռել էր բնաջինջ անել բոլոր յոյներին և նրանց տեղ արարներ բնակեցնել: Եգիպտական նաւերը անդադար լրջում էին այս ու այն կողմ և գրաւում յունաբնակ կղզիները: Բայց յունական նաւատորմիջն էլ Միասնական առաջնորդութեամբ հերոսութեան հրաշքներ էր զործում, հարուած հարուածի յետեից հասցնելով Եգիպտացիներին: Վերջապէս եկաւ 1825 թուականը, որ կորստաբեր դժբաղդութիւնների տարի էր յոյների համար: Իբրահիմ փաշան բաղմաթիւ զօրքերով մտաւ Մօրէա և կարծ ժամանակից յետոյ զրաւեց Կօրոնը,

Մողոնը և Նաւարինը: Այդ միենյն ժամանակ Ռաշետ փաշան թիւրքական զօրքերով մօտեցաւ Միսոլունգին և պաշարեց այդ անառիկ բերդը, որ արդէն երկու անգամ դիմացել էր թիւրքերի պաշարմանը: Յոյները երկար ժամանակ պաշարուած մնացին, երկար ժամանակ կռուեցին աննկարագրելի քաջութեամբ, բայց 1826 թ. սկզբին պաշարողներին օգնութեան հաստ իբրահիմ փաշան, ուստի և բերդը պիտի անձնատուր լինէր: Սակայն յօյները որոշեցին թանկ գնով ծախել իրանց կեանքը: Երբ փաշան բանիմաց մարդիկ պահանջեց բանակցելու համար, նրանք պատասխանեցին. «Մեր մէջ բանիմաց մարդիկ չկան. մենք բանակցել չենք կարող այլ կարող ենք միայն կռուել և հայրենիքի համար զոհուել...» Ապրիլ ամսի 22-ին, գիշերուայ ժամը երկուսին յանկարծ բացուեցին բերդի գոները և յօյները «Կեցցէ Յունաստան, իւցցէ ապատունիւն» գոռալով կասաղի առիւծների նման զրոհ տուին թիւրքերի վրա: Սկսուեց մի սոսկալի ծակատամարտ. զէնքերի շաշիւնը, կռւողների բացականչութիւնները մի անտանելի աղմուկ էին բարձրացրել: Լուսացաւ... կոիւր դադարեց: Դաշտը ծածկուած էր հազարաւոր զոհերի դիակներով: Քար ու թուփ ներկուած էին կարմիր արիւնով: Մօտ 10,000 յօյներից աղատուեցին միայն 1300 հոգի, որոնք ապաստարան գտան հեռաւոր լեռներում և ծմակներում: Թիւրքերը մտան քաղաք և հրի ու սրի ճարակ դարձրին մնացած բնակիչներին Մերունի եպիսկոպոսապետ Կապուալիսը ամբողջ օրը թափա-

ռում էր փողոցներում, հաւաքում էր վիրաւորներին, ծերերին և ուղարկում փամփուշտի գործարանը: Վերջապէս ինքն էլ եկաւ և սկսուեց մի սրտաշարժ տեսարան. բոլոր յօյները ծունկ չոքեցին և սկսեցին կրօնական ու ազգային երգեր երգել: Սակայն զաղանասիրտ թիւրքերը կոտրեցին դուռը և ներս մտան: Ոչ ոք տեղեց չշարժուեց, ոչ ոք չդիմադրեց: Մի կողմից սիրտ մորմոքեցնող երգն էր շարունակում, իսկ միւս կողմից թշուառների արիւնը հոսում էր ժամից յետոյ լոեց երգեցողութիւնը և գործարանում կենդանի մարդկանց փոխարէն միայն դիակներ մնացին: Ահա այդպէս Միսսոլունգին նորից բոնակալի ձեռքն անցաւ:

Այդ անառիկ բերդի անկումից յետոյ Յունաստանի վիճակը յուսահատական էր: Անտանելի սովոր թշնամու սրի հետ միացած անխնայ կերպով կոտրում, ոչնացնում էին թշուառ յօյներին: Կօլկօտրօնին բանտից աղատուել էր և նորից առաջնորդում էր յունական զօրքերին, բայց հանգամանքները փոխուել էին և նա առաջուայ նման գործել չէր կարողանում: Յունաստանի համար յուսոյ մի նշոյլ էր մնում: Դա այն իրողութիւնն էր, որ եւրոպական պետութիւնները հետզհետէ փոխում էին իրանց քաղաքականութիւնը և տրամադրում էին օգնութեան ձեռք կառկառելու աղատութեան համար նահատակող յօյներին:

«Հելենասէր» լնկերութիւնները տարածուել էին բոլոր պետութիւնների մէջ: Յոյների օգտին սկսուած հանդանակութիւնը մէծ աջողութեաբում

շարունակւումէր: Քաղաքակիրթ ազգերը, ազատամիտ մամուլը աւելի և աւելի յուղումէին Եւրոպայի սառնասրութեան պատճառով:

Վերջապէս յոյների բաղդի անիւը շուռ եկաւ դէպի լաւը: Լորդ Կաննինը Անգլիայի նախարարապետ դարձաւ: Բաւարիայի գահի վրա նստեց Լիւդովիկոս Ա.-ը, որ շատ սիրում էր յոյներին: 1825 թ. Նոյեմբերի 19-ին Ալեքսանդր Ա.-ը անակընկալ մահով վախճանուեց Տագանրոկում և նրա տեղ գահը բարձրացաւ Նիկողայոս եղայրը: Ռուսաց կայսեր գահակալութիւնը շնորհաւորելու համար Անգլիան իր կողմից պատգամաւոր ուղարկեց դուքս Վելլինգտոնին, որը անձամբ ծանօթ էր Նիկողայոս կայսեր հետ և մեծ յարգանք էր վայելում: Անգլիան իր այդ պատգամաւորին յանձնարարեց Ռուսաստանի հետ համաձայնութիւն կայացնել Յունաստանին օգնելու համար: Զափաղանց զաղտնի խորհրդածութիւններից յետոյ վերջապէս 1826 թ. Ապրիլի 4-ին կայսրը հաւանութիւն տուեց այն արձանագրութեանը, որով Անգլիան ու Ռուսաստանը հրատարակելու էին Յունաստանի անկախութիւնը և պարտաւորում էին հարկաւոր դէպքումնոյն իսկ զէնքի օգնութեամբ ընդունել տալ այդ որոշումը:

Նախքան այդ արձանագրութեան մասին միւս պետութիւններին յայտնելը, Ռուսաց կառավարութիւնը մի խիստ յայտագիր ուղարկեց Բ. Դրան և ի միջի այլոց պահանջեց Մոլդավիայի, Վալաքիայի ազատութիւնը: Յունաստեաց Մետերնիխը

չափաղանց ուրախացաւ, որ յայտագրի մէջ մի խօսք անգամ չկայ Յունաստանի մասին: Նա համոզեց սուլթանին կատարել այդ պահանջները: 1826 թ. Սեպտեմբերի 26-ին Ակկերման քաղաքում կաղմուեց մի գաշնագիր վերցիշեալի մասին: Բայց հէնց որ այդ գաշնագրութիւնը երկու կողմերի ստորագրութեամբ վաւերականութիւն ստացաւ, Անգլիան և Ռուսաստանը խօշնյայանեցին իրանց (Ապրիլի 4-ի) պայմանագրութիւնը: Մետերնիխը խաբուած էր: Նրա կատաղութեանը չափ չկար, բայց արդէն ուշէր:

Սուլթանը յոյների վերջին անաջողութիւններից և Աւստրիայի տուած յոյսերից խրախուսուելով, յանդուզն կերպով մերժեց Անգլիայի և Ռուսաստանի պահանջները: Ամբողջ Մօրէան և Աթէնքը արդէն նորից թիւրքերի ձեռքն էին անցել: Ազատ էին միայն մի քանի կղզիներ, բայց նրանց մեծ մասն էլ կոտորածների ու զաղթականութեան պատճառով ամայի էին դարձած: Եթէ այդ բոլորի վրա աւելացնենք և ներքին երկպառակութիւնները, այն ժամանակ հասկանալի կ'լինի Յունաստանի ողբալի վիճակը: Բարեբաղդաբար 1827 թուականին Յունաստան եկան անգլիացի գեներալ Զորձը և լորդ Կոկրէն, որոնց ջանքերով վերջացաւ կորստաբեր գժառութիւնը: Նոյն տարուայ Մարտ ամսին Թրեղէնում գումարուեց ազգային ժողով, որը Յունաստանի համար ժամանակաւոր կառավարիչ ընտրեց կոմս Յ. Կոպողիստրիային: Հայրենասէր կոմսը վաղուց արդէն (1822 թ.) զբկուել էր պաշտօնից, ապրում էր նախ Փարիզում ապա

ԺԵՆԿՈՒՄ և այդտեղից անդուլ ջանքերով աշխատումէր իր հայրենիքի ազատութեան համար: Նա ուրախութեամբ ընդունեց իր վրա դրուած պարտականութիւնը և տեղափոխուեց Յունաստան:

Սյդ միւնյն ժամանակ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները Լօնդոնում (Յուլիսի 6-ին, 1827 թ.) կազմեցին մի դաշնադրութիւն, որով այդ պետութիւնները պարտաւորում էին վերջնականապէս ազատել Յունաստանը: Դաշնագիրը ստորագրելուց յետոյ իւրաքանչիւր պետութիւն պատշաճաւոր հրաման ուղարկեց իր նաւատորմիղին: Երեք պետութիւնների միացեալ նաւատորմիղը մօտեցաւ նաւարինին և կանգնեց Թիւրքա-Եղիպատական նաւատորմիղի դէմք: Սուլթանին նորից առաջարկեցին հաշտութեամբ վերջացնել Յունաստանի գործը, բայց նա իր սովորական մեծամուլթեամբ պատասխանեց, որ ոչ ոք իրաւունք չունի իր ընտանեկան գործերին խառնուելու: Դրանից յետոյ մի սոսկալի ձակատամարտ տեղի ունեցաւ (1827 թ. Տոկտեմբերի 20-ին) միմեանց թշնամի նաւատորմիղների մէջ: Ճակատամարտի հետևանքը եղաւ Թիւրքա-Եղիպատական նաւատորմիղի ոչնչանալը: Նրա 82 նաւերից մնացին միայն 27-ը, այն ևս ցիր ու ցան եղած:

Սյդ պարտութիւնը փոխանակ մեղմացնելու աւելի զայրացրեց սուլթանին: Նա հրատարակեց մի խաթթի-շէրիֆ, որով վերաւորում էր բոլոր քրիստոնեաներին ընդհանրապէս և Ռուսաստանին յատկապէս, ասելով:

«... Ռուսաստանը Թիւրքիայի աւանդական թշնամին է, ուստի և իւրաքանչիւր մահմեդականի սրբազն պարտականութիւնն է ատել ու արհամարել այդ պետութեանը...»

Վերջապէս լցուեց Ռուսաստանի համբերութեան բաժակը. 1828 թ. Ապրիլի 14-ին Նիկողայոս կայսրը պատերազմ հրատարակեց Թիւրքիայի գէմ: Ռուսաստանին աջակցեցին Անգլիան և Ֆրանսիան: Ռուսական ազատարար զօրքը մտաւ Թիւրքիայի սահմանները և սկսեց իր յաղթական արշաւանքը: Անգլիական նաւատորմիղը Կօդրինգտոն ծովապետի առաջնորդութեամբ մօտեցաւ Ալէքսանդրիային և Մահմեդ Ալի փաշային ստիպեց յետ կանչել իր որդեգրին—իրացիմ փաշային: Ֆրանսիացի գեներալ Մէզոնը 14,000 զինուորներով մտաւ Մօրէա և այնտեղից դուրս քշեց բոլոր եղիպատացիներին: Յոյներն էլ կրկնապատճեցին իրանց ջանքերը: Նրանք ամեն տեղ աննկարագրելի հերոսութիւն էին ցոյց տալիս:

Վերջապէս Ռուսաստանը յաղթող հանդիսացաւ: Պատերազմը վերջացաւ Ադրիանապոլսի (1829 թ. Սեպտ. 14-ին) դաշնագրով, որով Յունաստանը կիսանկախ պետութիւն դարձաւ և պարտաւորուեց տարեկան մէկ և կէս միլիոն պիսատր հարկ վճարել Թիւրքիային *): Դրանից յետոյ էլ կոմս Կապոդիստր

*) Ծանօթ. 1830 թ. Լօնդոնում գումարուած կոնգրէսը հարկատութիւնը վերացրեց և Յունաստանը սուլորովին անկախ ու ազատ պետութիւն դարձեց. սակայն Խերոպացի ասրդարագատութեանը չնորհիւ կրետէն, որ ամենից շատ արին էր թափել ամենից շատ զոհիր էր տուել ազատութեան համար, դարձեալ չ'ստացաւ ազատութիւն: Նա

րիան, որ Ռուսաստանի ազգեցութեան տակ էր, մնայ իր պաշտօնում. բայց շուտով առաջ եկան բազմաթիւ գժգոհներ և վերջապէս բանը այն տեղը հասաւ, որ Կապոդիստրիային եկեղեցի գնալիս սպանեցին: Հանգուցեալի կրտսեր եղբայրը Օգոստոս Կապոդիստրիան կառավարութեան ղեկը իր ձեռքն առաւ. բայց երկպառակութիւնները դարձեալ շարունակուեցին, ուստի կարծ ժամանակից յետոյ դա էլ յուսահատուեց, թողեց ամեն ինչ և եղբօր ամիւնը իր հետ վերջնելով՝ տեղափոխուեց Քօրֆու կղզու վրա: Դրանից յետոյ պետութիւնները Յունաստանը միասնական կառավարութիւն դարձրին (1832 թ.) և նրա վրա թագաւոր կարգեցին Բաւարիայի Լիւլիլիկոս թագաւորի որդուն
— 17 տարեկան Օտտոնին*):


մասց Մահմեդ Ալի փաշայի Էջմանութեան տակ մինչև 1840 թ. և ապա Նորից յանձնուեց Թիւրքիային: Կրետէի գժբաղջութիւնն այն էր, որ եթէ նա յանձնուեր Յունաստանին, այն ժամանակ Յունաստանը մի ուժեղ ծովային պետութիւն կ'դաշնար: Զ'նայելով այդ գժբաղդ հանգամանքներին, Կրետէի ապատական ձգտութերը չ'մուան: 1858, 1866, 1877, 1887, 1889, 1896 և անցեալ 1897 թուականներին քաջանիրս կրետացիները նորից ապատամեցին և փորձեցին թողթափել թիւրքական ծանր լուծը: Վերջնն ապատամրութիւնը այն պիսի մեծ ծաւալ ստացաւ, որ Յունական կառավարութիւնը իր ժողովրդի անվերջ պահանջներից ստիպուած միջամտեց և վերջապէս պատերազմ սկսեց Թիւրքիայի դէմ: Սակայն Եւրոպան չեղոր գիրք բռնեց և նոյն իսկ Բալկանան միւս պետութիւններին արգելեց փոքրիկ Յունաստանին օգնութեան ձեռք կառկառելու: Յոյները յաղթուեցին: Արիւնաշաղաղ Կրետէն գարեեալ Թիւրքիրի ձեռքում մասց և միայն ինքնավարութիւն ստացաւ, այն ևս մոռած տառերով և ոչ իրականապէս:

*) Օտտոնը թագաւորեց 1832—1862 թ.: 1862 թուականին, անտառնելի գժտութիւնների պատճառով, նա հրաժարուեց գահից և հեռացաւ Յունաստանից: Նույնից յետոյ՝ ընտրութեամբ և պետութիւնների համաձայնութեամբ գահը բարձրացաւ Դանիայի Քրիստիան թագաւորի որդին—Դէորգը:

Ահա այլպէս չորս հարիւր տարի թիւրքական ծանրը լծի տակ հեծող Յունաստանը վերջապէս ստացաւ իր ազատութիւնը, թէև դրա համար 58 երկար ու ձիգ տարիներ (1770—1828 թ.) յեղափոխական կոիւ մղեց, հարիւր հազարներով զոհներ տուեց, թէև իր ամեն մի վայրը ազգային նահատակների արիւնով ներկեց: Անցան տարիներ.... Նա ծաղկել ու ամրապնդուել սկսեց*), բայց երբէք չ'մոռացաւ իր անձնազօհ զաւակներին, չ'մոռացաւ նրանց հերոսութիւնն ու թափած արիւնը:

Իւրաքանչիւր տարի Յունաստանի զանազան մասերում հանդիսաւոր տօն և հոգեհանգիստ է կատարելում և ամեն անգամի հազարաւոր բերաններ ջերմեռանդ սրտով մրմնջում են.

«Հանգի՛ստ ոսկորներիդ, հայրենիքի ազատութեան անմահ նահատակներ»:



*) Այժմեան Յունաստանը ունի 1175 քառակ. մղն տարածութիւն և 2 մլնինից աւելի բնակիչներ: Նրա մայրաքաղաքն է Աթենք, որ ունի համալսարան: Առեւրական նաւահանգիստներից նշանաւոր են՝ Քօրֆու և Պատրաս:

ՄԵՐ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ.

-
- 1) «Исторія XIX вѣка» Гервинуса.
 - 2) «Всеобщая история» Г. Вебера.
 - 3) «Борьба Греции за независимость» Е. Феоктистова.
 - 4) «Всемирная история» Ф. Шлоссера.
 - 5) «Энциклопедический словарь» Брокгауза и Ефрона.
 - 6) «Исторія Европы XIX вѣка» А. Ч. Файфа.
-

ՀՀ Ազգային գրադարան



NL0570805

arm

(129)

21 MAY 2013

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԵԶ. Թ. Ա. Փ. Չ Ե Ա. Ն. — Խալամ. պատմական տեսութիւն.

» — Բաւլզարիայի անցեալը: պատմ. տես.

ԷԿՐԻ Դ. Ա. Ջ. Բ. Վ. Կ. — Զարա. Կովկաս. լեռն. կեանքից.

Գինն է 20 ԿՈԳԵԿ.

18158